ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *17.04.2018թ.*
- *Ժամը՝* *14:00*

Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ 10.04.2018 թվականին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

16.04.2018 թվականին ստացվել է պատասխան՝ ըստ որի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Մասնակիցների կողմից որակավորման պահանջների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	տվյալները
1	Ֆոտոն ՍՊԸ	բավարար
2	Ա/Ձ Վարդան Վարդազարյան	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Ընտրված մասնակից		
		Անվանուն	Պայմ. գին	ԱԱՀ
1	Հաց	Ֆոտոն ՍՊԸ	13901856	+
2	Հաց	Ա/Ձ Վարդան Վարդազարյան	660000	-

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

4. Հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պահել 10 օր անգործություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

5. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ն.Աղումյան*

Հանձնաժողովի անդամներ՝ *Ք.Սարգսյան*

Մ.Փանոսյան

Հ.Նազարյան

Ա.Քաջաջյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան*